

«ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ» ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՈՐԲԻՆԳԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԱՐԱՔԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ*

Բանալի բառեր - «փափուկ ուժի» տեսություն, Ջոզեֆ Նայ, «կոշտ» և «փափուկ» ուժեր, լրբբինգի ինստիտուտ, ավանդական ուժի փոխակերպում, լրբբինգի տեխնոլոգիա:

Մուտք

Քաղաքական գիտության մեջ «փափուկ ուժի» տեսության և լրբբինգի ինստիտուտի միջև կան բազմաթիվ զուգահեռներ, գործառության ինստիտուտներ, որոնց հարաբերակցության վերհանումն էական ազդեցություն կարող է ունենալ դրանց առանձին կամ համալիր կիրառությունների արդյունավետության և քաղաքական գիտության շրջանակներում երևույթների առավել լավ ըմբռնման վրա:

Բանն այն է, որ թե՛ լրբբինգի գործիքակազմը, թե՛ «փափուկ ուժի» տեխնոլոգիան աշխատում են հասարակական կարծիքի վրա ազդեցություն ունենալու նպատակադրմամբ, այն տարբերությամբ, որ, որպես կանոն, «փափուկ ուժի» քաղաքականությունը թելադրվում է դոմինանտ սուբյեկտի կողմից, իսկ լրբբինգի պարագայում հասարակական կարծիքը ձևավորվում է հասարակական շրջանակներում, սակայն վերջնական թիրախը ոչ թե հասարակությունն է, այլ այդ հասարակության միջոցով որոշում կայացնողները: Ուստի երկուսի վերջնական թիրախն էլ այսպես թե այնպես էլիտաներն են: «Փափուկ ուժի» տեխնոլոգիայի կիրառման նպատակներից մեկը կոնկրետ աշխարհայացքով որոշում կայացնող շրջանակների ձևավորումն է: Լրբբինգի պարագայում էլ, որպես կանոն, թիրախը կրկին որոշում կայացնողներն են: Թերևս տարբեր են թիրախին հասնելու գործիքակազմերը: Այլ կերպ ասած՝ սովորաբար «փափուկ ուժի» քաղաքականությունը փորձում է ձևավորել էլիտա, իսկ լրբբինգն աշխատում է արդեն իսկ ձևավորված էլիտային դարձնել քաղաքական ճնշման թիրախ՝ հաճախ օգտագործելով նաև «փափուկ ուժի» քաղաքականության տեխնոլոգիական գործիքները: Հետևաբար

ՎԷՄ համահայկական հանդես, ԺԱ (ԺԷ) տարի, թիվ 4 (68), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2019

* Հոդվածն ընդունվել է տպագրության 22.10.2019:

կարևոր է հասկանալ վերը նշված հարաբերակցության և տասնյակ այլ զուգահեռումների տեսական ու կիրառական կողմը, ինչպես նաև բացահայտել, թե զուգահեռ զարգացող այս ինստիտուտները գործառության ինչ շերտեր են շոշափում:

1. «Փափուկ ուժի» տեսությունը

Երկրորդ աշխարհամարտից հետո աշխարհում ընթացող զարգացումներն ամերիկյան քաղաքագիտական մտքի առաջ լուրջ խնդիր դրեցին պարզելու՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները գնալով կորցնում է արդյոք միջազգային ազդեցության շրջանակը, թե՞ ոչ, և ուժի ավանդական արտահայտչաձևերը (բանակ, տնտեսություն, աշխարհագրական տիրապետության տարածք) բնութագրակա՞ն են արդյոք հետպատերազմյան քաղաքական գործընթացների ընդհանուր տրամաբանության համար: Քաղաքական հետազոտությունների ամերիկյան կենտրոնները վստահ էին, որ եթե, ի դեմս իրենց, ձախողվի հզորագույն տերությունը, դա անխուսափելիորեն կհանգեցնի միջազգային կայունության համար աղետալի հետևանքների:

Ուժի ավանդական ընկալումը ենթադրում էր համապատասխան կարողունակության, որոշակի ռեսուրսների՝ բնակչության, տարածքի, բնական պաշարների, տնտեսական հզորության, զինված ուժերի տիրապետում, ինչպես նաև քաղաքական կայունություն:

Ուժի հետպատերազմյան ընկալումը հետզհետե սկսեց փոխվել: Այսօր նրանում այլևս չեն կարևորվում զինված ուժերի և ընդհանրապես ուժի գնահատման նախապատերազմյան չափորոշիչների ավանդական ընկալումները: Միջազգային հարաբերություններում և պետությունների ազդեցության գոտիների ձևավորման գործընթացում առավել մեծ դեր է ստանձնել տեխնոլոգիայի, կրթության և տնտեսության առաջընթացը, մինչդեռ աշխարհագրությունը, բնակչությունը և հանքահումքային պաշարները դառնում են պակաս կարևոր:

Ուշագրավ է, որ հենց ամերիկյան քաղաքագիտական միտքը սկսեց գեներացնել «փափուկ ուժի» քաղաքականության հիմնաքարային դրույթները, այն դեպքում, երբ Ամերիկյան տիրապետում է ռազմական, քաղաքական, տնտեսական, հանքահումքային և գիտական վիթխարի կապիտալի: Ըստ ամենայնի, ամերիկյան քաղաքագիտական միտքը հանգել է ուժի ավանդական չափորոշիչների փոփոխության գաղափարին այն բանից հետո, երբ պարզ է դարձել, որ ավանդական ուժի կիրառումն էականորեն սահմանափակվում է միջազգային նոր հարաբերություններով: Ուշագրավ է, որ դեռևս 1975 թ. Հենրի Քիսինջերը նկատել է. «Մենք մտնում ենք նոր ժամանակաշրջան. միջազգային հին կաղապար-

ները քանդվում են: Աշխարհը փոխկապվածության մեջ է հայտնվել տնտեսական, հաղորդակցական և մարդկային ձգտումներից»¹:

Այսպիսով՝ ուժի ընկալման ամերիկյան հայեցակարգի փոփոխությունն աստիճանաբար և անխուսափելիորեն հանգեցնում է միջազգային հարաբերություններում լուրջ տեղաշարժերի, վերանայումների, ինչպես նաև պետությունների քաղաքական կշիռների փոփոխությունների: Վերոգրյալի սահմաններում քաղաքական գործընթացների ներկա միտումը տանում է նրան, որ անվտանգային միջավայրերի ապահովության ռազմական բաղադրիչը գնալով սպասարկողի դերում է հայտնվում: Ազգային անվտանգության կոնցեպտը դառնում է ավելի բարդ ու ընդգրկուն, քան զուտ պետության տարածքային ամբողջականության պահպանումն է:

Ուժի ավանդական ընկալումների փոփոխությունը հանգեցնում է նաև երկկողմ և բազմակողմ ինտեգրացիոն ձևաչափերի զարգացմանը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների ստեղծմանը: Այսպես՝ հետպատերազմյան ժամանակահատվածում կազմավորվեցին ՄԱԿ-ը, Եվրոպայի խորհուրդը, Եվրոպական միությունը, Եվրոպայի անվտանգության ու համագործակցության կազմակերպությունը և այլն: Թեև այս կառույցների ձևավորման հիմքում դրված չէր ավանդական ուժի փոխակերպման կոնցեպտը, սակայն դրանք բոլորն էլ անվտանգության պահանջների բավարարմանն ուղղված և հետագա պատերազմների սանձազերծումը կանխելուն միտված կազմակերպություններ էին: Ինչ-որ առումով նաև հենց ինտեգրացիոն կազմավորումների ստեղծումն էականորեն սահմանափակեց ավանդական ուժի առանձին դրսևորումների կիրառման փորձերը, հետևաբար քաղաքագիտական միտքը կանգնեց ուժի նոր կոնցեպտը ձևակերպելու խնդրի առաջ, ինչն արեց Ջոզեֆ Նայը՝ ի դեմս «**փափուկ ուժի**» տեսության:

«*Փափուկ ուժի*» քաղաքականության տեսությունն ու տեխնոլոգիան որպես այդպիսին բանաձևելու սահմանել է *Հարվարդի համալսարանի Քենեդու անվան դպրոցի պրոֆեսոր Ջոզեֆ Նայը*: Նայի տեսությունը կիրառական քաղաքականության և ակադեմիական քաղաքագիտության համադրության արդյունք է: Հեղինակն աշխատել է ԱՄՆ-ի տարբեր վարչակազմերում: Բիլ Քլինթոնի կառավարման տարիներին եղել է Պենսիլվանիայի ղեկավարի օգնականը՝ միջազգային անվտանգության գծով, իսկ 1993-1994 թթ. գլխավորել է ԱՄՆ-ի հետպատերազմյան ազգային խորհուրդը: Վերլուծական տարբեր կենտրոններ ղեկավարելուց բացի՝ Բ. Օբամայի օրոք Ջ. Նայն ընդգրկված է եղել նաև ռազմավարական կարևորության երկու հետազոտական նախագծերում՝ «Հանուն նոր Ամերիկայի անվտանգության» և «ԱՄՆ-ի ազգային անվտանգության բարեփոխումներ»: Պրոֆեսոր Ջ. Նայի տեսական դրույթներն ունեն հստակ գիտավերլուծական և կիրառական նշանակություն, որոնք քաղաքական գիտության ուղղությանն արժանացան վերջին տասնամյակներին²: Քաղաքականությունից

1 Joseph S. Nye Jr., Soft Power /Foreign Policy/, N 80, Washington, Twentieth Anniversary, (Autumn, 1990), p. 156.
 2 Տե՛ս «Փափուկ ուժի» (Soft Power) տեխնոլոգիայի կիրառման անհրաժեշտության մասին, Եր., 2016 /<https://mnmargaryan.wordpress.com/2016/08/27/%d6%83%d5%a1%d6%83%d5%b8%d6%82%d5%af%d5%b8%d6%82%d5>

գիտություն և գիտությունից քաղաքականություն անցումը, տեսական քաղաքագիտության գործնական կիրառումը քաղաքական պլանավորման, հեղափոխության, հակահեղափոխության և այլ բնագավառներում, որպես այդպիսին, արևմտյան ֆեոդալներ են և լրջագույն տեղ են զբաղեցնում արևմտյան կառավարման փոփոխությունների մեջ:

Պրոֆեսոր Զ. Նայի «փափուկ ուժի» տեսությունը մի կողմից միջազգային հարաբերությունների տեսական ընկալումների արդյունք է, մյուս կողմից՝ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության պահանջունքների հետևանք³:

Քաղաքական գիտության համար այսօր արդեն լիովին պարզ է, որ միջազգային հարաբերություններում գնալով կարևորվում են մշակույթը, քաղաքականությունը և արժեքային պատկանելությունը:

Զ. Նայը «փափուկ ուժը» սահմանում է որպես «կարողություն՝ ստանալու այն, ինչ ցանկանում ես, գրավիչ լինելու միջոցով, ոչ թե հարկադրանքի կամ ֆինանսական գործարքների»⁴: Նա ընդգծում է, որ գայթակղությունը միշտ առավել արդյունավետ է, քան հարկադրանքը: Հեղինակը «փափուկ ուժի» քաղաքականությունը դիտարկում է բազմակողմանիության համատեքստում և նկատում, որ «Խաղաղությանը հաղթելն ավելի բարդ է, քան պատերազմում հաղթելը, և փափուկ ուժը կարևոր է խաղաղությանը հաղթելու համար»⁵:

Զ. Նայը «փափուկ ուժի» աղբյուր է դիտում մշակույթը, ներքին արժեքները, արտաքին քաղաքականությունը:

Ուժի մասին խոսելիս Զ. Նայը նկատում է, որ ուժը նման է եղանակի. բոլորը կախված են դրանից և խոսում են դրա մասին, բայց քչերն են հասկանում: Օրինակ՝ կալվածատերերը և տեսաբանները փորձում են կանխատեսել եղանակը, իսկ քաղաքական առաջնորդներն ու վերլուծաբանները՝ բացատրել և կանխատեսել ուժային հարաբերությունների փոփոխությունները կամ դրանց զարգացման դինամիկան: Ուժը նման է նաև սիրուն. ավելի հեշտ է փորձել, քան սահմանել և չափել: Բառարանային սահմանմամբ՝ ուժն ինչ-որ բան անելու կարողությունն է: Հիմնականում ուժը կարողություն է՝ ստանալու այն արդյունքը, որը դու ցանկանում ես: Բառարանային այլ սահմանմամբ՝ ուժ նշանակում է կարողունակություն՝ ազդելու այլոց պահվածքի վրա: Մասնավորապես, ուժն այլոց պահվածքի վրա ազդելու կարողություն է՝ ստանալու ցանկալի արդյունք: Այլոց պահ-

[%aa%d5%ab-soft-power-%d5%bf%d5%a5%d5%ad%d5%b6%d5%b8%d5%ac%d5%b8%d5%a3%d5%ab%d5%a1%d5%b5%d5%ab-%d5%af%d5%ab%d6%80%d5%a1%d5%bc%d5%b4/#more-237](#) (մուտք՝ 03.10.2019):

3 Տե՛ս **Lin Li, Hongtao Leng**, Joseph Nye's Soft Power Theory and its Revolution Towards Ideological and Political Education, Humanities and Social Sciences, vol. 5, N 2, 2017, էջ 69-74:

4 **Joseph S. Nye**, Soft Power, The means of Success in World Politics, New York, 2004, p. x.

5 Նույն տեղում:

վաճքի վրա ազդելու բազմաթիվ ձևեր կան. կարելի է պարտադրել, սպառնալ, վճարել կամ լինել գրավիչ և համաձայնել նրանց հետ՝ հասնելու ցանկալիին⁶:

Զ. Նայը կասկածի տակ է դնում ավանդական ուժի արդյունավետության հարցն ընդհանրապես. «Ուժային ռեսուրսների տիրապետումը չի երաշխավորում, որ դու կարող ես հասնել ցանկալի արդյունքի, օրինակ՝ ռեսուրսային առումով ԱՄՆ-ն շատ ավելի ուժեղ էր, քան Վիետնամը, բայց մենք պարտվեցինք Վիետնամական պատերազմում: Ամերիկան աշխարհի միակ գերտերությունն էր 2001 թ., բայց մենք ձախողեցինք մեր պաշտպանությունը սեպտեմբերի 11-ին»⁷:

Զ. Նայն առաջարկում է «կոշտ» և «փափուկ» ուժերի ռեսուրսային և ուժային արտահայտչաձևերի տարբերությունների ներքոբերյալ աղյուսակները⁸:

Աղյուսակ 1

	Կոշտ ուժ	Փափուկ ուժ
Վարքագծի ուղղություններ	սպառնալիք դրդում-հարկադրանք	համընկնում օրակարգի ձևավորում-գրավչություն
Հավանական ռեսուրսներ	ճնշում սանկցիաներ վճարումներ կաշառք	ինստիտուտներ արժեքներ մշակույթ քաղաքականություն

Աղյուսակ 2

	Վարքագիծ	Առաջնային արժեքներ	Կառավարական քաղաքականություն
Զինվորական ուժ	պարտադրանք զսպում պաշտպանություն	սպառնալիք ճնշում	պարտադրող դիվանագիտություն պատերազմ դաշինք
Տնտեսական ուժ	դրդում հարկադրանք	վճարումներ պատժամիջոցներ	օգնություն կաշառք պատժամիջոցներ
Փափուկ ուժ	գրավչություն օրակարգի ձևավորում	արժեքներ մշակույթ քաղաքականություն ինստիտուտներ	հանրային դիվանագիտություն երկկողմանի և բազմակողմանի դիվանագիտություն

6 Տե՛ս նույն տեղում, էջ xii:

7 Նույն տեղում, էջ 3:

8 Նույն տեղում, էջ 3, 8:

Այսպիսով, ինչպես վերը նշվեց, «փափուկ ուժի» տեխնոլոգիայի կիրառումն ընդգրկում է եռաչափ հարթություն՝ մշակութային, քաղաքական-արժեքային և արտաքին-քաղաքական: Այս ոլորտներում է, որ «փափուկ ուժի» քաղաքականության գործադրմանը լծված ուղեղային կենտրոններն ու պետություններն արտահանում են այնպիսի տեղեկատվություն և վարում այնպիսի քաղաքականություն, որոնք միտված են ձևավորելու միջազգային ազդեցության լայն շրջանակ:

Փաստորեն, «փափուկ ուժի» քաղաքականությունը ենթադրում է աշխատանք գիտակցության հետ տեղեկատվության, գիտելիքների և մշակույթի միջոցով: Դա ներառում է նաև այն իդեալներն ու արժեքները, որոնք Ամերիկյան արտահանում է կես միլիոնից ավելի օտարերկրյա ուսանողների միջոցով, որոնք ամեն տարի սովորում են ամերիկյան համալսարաններում, իսկ հետո՝ վերադառնում իրենց հայրենի երկրները, կամ այն ձեռնարկատերերի, որոնք հայրենիք են վերադառնում Սիլիկոնե հովտում աշխատելուց կամ վերապատրաստվելուց հետո: Ենթադրվում է, որ այդ մարդիկ հետագայում պետք է բարձրանան մինչև իշխանության վերին օղակներ և վարեն այնպիսի քաղաքականություն, որը շահեկան կլինի «փափուկ ուժի» գեներացման աղբյուրների համար:

«Փափուկ ուժի» քաղաքականության գործադրման համար թիրախային նշանակություն ունի հատկապես կրթության համակարգը: Միայն կրթության միջոցով է այն թույլ տալիս որոշակի աշխարհայացք ձևավորել օտարերկրյա հյուրերի շրջանում, որով արտահայտվում են բուն՝ ընդունող երկրի արժեքային կողմնորոշիչները, և որը հնարավորություն է ընձեռում հյուրընկալ երկրի նկատմամբ ապագայում ակնկալելու բարեհաճ վերաբերմունք⁹:

Եվ արդեն 2011 թ. սեպտեմբերի 11-ից հետո, ըստ էության բախվելով անվտանգության սեփական հզոր համակարգի ծախսողմանը, ԱՄՆ-ն նախաձեռնեց «փափուկ ուժի» քաղաքականության գործնական կիրառմանն ուղղված տարբեր բնույթի խոշոր նախագծեր, և դրանց իրականացման համար մոբիլիզացվեցին հսկայական ռեսուրսներ¹⁰:

9 Տե՛ս «Փափուկ ուժի» (Soft Power) տեխնոլոգիայի կիրառման անհրաժեշտության մասին, <https://mimmargaryan.wordpress.com/2016/08/27/%d6%83%d5%a1%d6%83%d5%b8%d6%82%d5%af%d5%b8%d6%82%d5%a%d5%ab-soft-power%d5%bf%d5%a5%d5%ad%d5%b6%d5%b8%d5%ac%d5%b8%d5%a3%d5%ab%d5%a1%d5%b5%d5%ab-%d5%af%d5%ab%d6%80%d5%a1%d5%bc%d5%b4/#more-237>:

10 Հաշվի առնելով ներկա աշխատանքի բուն նպատակը՝ սահմանափակվում ենք այս հարցի զուտ տեսական քննարկմամբ՝ նկատի ունենալով, որ «փափուկ ուժի» քաղաքականության գործնական կիրառման գիտական քննությունը շատ ավելի մեծ աշխատանք է ենթադրում:

2. Լոբբինգի ինստիտուտի էության շուրջ

«Լոբբինգ» եզրի առաջացման վերաբերյալ քաղաքական գիտության մեջ առկա բազմաթիվ վարկածներն իրարից տարբերվում են երևույթի ծագման և՛ ժամանակագրական, և՛ գործառնական առումներով:

Լոբբիստական համակարգված գործունեության ծավալման մասին հայտնի էր դեռևս անտիկ հունահռոմեական իրականության մեջ, երբ լոբբիստները փորձում էին հասնել արդյունքների, որոնք ենթադրում էին ինչպես սենատորների, այնպես էլ պլեբսի մասնակցությունը: Այդ ընթացքում նրանք ճնշում էին գործադրում իրենց թիրախ խմբերի վրա՝ տարբեր բնույթի հարցերի լուծմանը հասնելու համար:

Սակայն քաղաքական գիտության մեջ դեռևս վիճելի են լոբբինգի՝ որպես կազմակերպված քաղաքական գործունեության ծագումն ու նախնական զարգացումը: Այնուամենայնիվ, քաղաքական գիտության մի շարք հետազոտողներ փորձել են որոշակի սահմանումներ գտնել:

Այսպես՝ 1960 թ. Լ. Միլբրաֆը սահմանեց, որ լոբբինգը հաղորդակցական գործընթաց է. «Հաղորդակցությունը միակ միջոցն է ազդելու կամ փոխելու ընկալումը, հետևաբար լոբբինգի գործընթացն ամբողջությամբ հաղորդակցական գործընթաց է»¹¹:

Ավելի ուշ Պ. Կոպլը առաջարկեց նախորդների համեմատ առավել ընդգրկուն սահմանում. «Լոբբինգը շահագրգիռ ներկայացուցիչների միջոցով պետական մարմինների օրենսդրական-վարչական որոշումների փորձն է կամ հաջող ազդեցությունը: Ազդեցությունը նախատեսում և ենթադրում է կապի ու դրա նպատակային կիրառության օրենսդրական կամ գործադիր մարմինների օգտագործում»¹²:

Այսպիսով՝ ստացվում է, որ լոբբինգը հանրային-քաղաքական համակարգի զարգացած ինստիտուտ է, որը ֆիզիկական անձանց և իրավաբանական կազմակերպությունների միջոցով ճնշում է գործադրում կենտրոնական իշխանության կամ տեղական ինքնակառավարման մարմինների վրա՝ իրենց շահերին համահունչ որոշումներ ընդունելու համար: Լոբբինգի վերջնականորեն համաձայնեցված սահմանում չկա: Օրինակ, Լիոնել Զեթերի կարծիքով, պարզ և ամբողջական սահմանումը հետևյալն է. «Լոբբինգը հանրային քաղաքականության ձևավորման փնտրտուքի գործընթաց է՝ կառավարության (դրա ինստիտուտների) և օրենսդրական գործընթացի վրա ազդելու նպատակով»: Ըստ հեղինակի՝ այն նաև «քաղաքական համոզման արվեստ է»¹³:

11 Charrad K., Lobbying the European Union, Munster, 2009, p. 3.

12 Koeppl P., The acceptance, relevance and dominance of lobbying the EU Commission-A first-time survey of the EU Commission's civil servants. In: Journal of Public Affairs, vol. 1 (N 1), p. 71.

13 Zetter L., Lobbying the Art of Political Persuasion, London, 2014, p. 2.

3. Լոբբինգի ինստիտուտի կառուցվածքը

Լոբբիստական կազմակերպությունները միավորում են ազգային, կրոնական, մշակութային, ռասայական և սոցիալական միևնույն պատկանելությունն ու հետաքրքրությունն ունեցող մարդկանց:

Լոբբիստական գործունեության կազմակերպարավական ձևերը բազմաթիվ են՝ սկսած իրավաբանական տարաբնույթ կազմակերպություններից մինչև անհատ գործիչներ: Այս ընտրությունը հաճախ պայմանավորվում է օրենսդրարավական այն հնարավորություններով, որոնք տվյալ երկիրն առաջարկում է լոբբիստական խմբերին:

Թոմաս Լայնը և Ջոն Մաքսվելը, ըստ գործունեության ուղղվածության, առանձնացնում են լոբբիստական կազմակերպությունների հետևյալ խմբերը՝ քաղաքական, սոցիալական, տնտեսական, տարածաշրջանային, օտարերկրյա-էթնիկ և հատուկ ճնշման¹⁴:

Քաղաքական լոբբիստական խմբերը, որպես կանոն, խոշոր կորպորացիաներն ու ֆինանսաարդյունաբերական հսկաներն են, որոնք, տիրապետելով սոցիալ-տնտեսական որոշակի կապիտալի, ձգտում են տվյալ երկրի օրենսդիր և գործադիր իշխանությունների վրա որոշակի ազդեցության հասնելու:

Սոցիալական լոբբիստական խմբերը մեծ մասամբ արհեստակցական միություններն են, ինչպես նաև հասարակության կոնկրետ հատվածի, խմբի կամ թիրախ խմբի միությունները, որոնք փորձում են բարձրացնել այնպիսի հարցեր, որոնք առանձնահատուկ կերպով վերաբերում են տվյալ խմբի սոցիալական խնդիրների լուծմանը:

Տնտեսական լոբբիստական խմբերն իրենց բնույթով նման են քաղաքականին, այն առումով, որ նրանցում նույնպես գերակա դեր ունեն ֆինանսական հսկայական կապիտալի տիրապետող միություններն ու նրանց դուստր կազմակերպությունները, որոնք ձգտում են հասնելու քաղաքական ազդեցության:

Տարածաշրջանային լոբբիստական խմբերը ձգտում են որոշակի առավելության հասնելու լոկալ մակարդակում, այսինքն՝ կոնկրետ հարցի վերաբերյալ: Լոբբինգի այս խումբը, ըստ էության, որոշակի նմանություններ ունի հայրենակցության ֆենոմենի հետ, երբ մարդիկ համախմբվում են՝ ելնելով ազգակցական կամ հայրենակցական կապերից:

Էթնիկ լոբբիստական խմբերն այն ֆենոմեններն են, որոնց հետ մեզանում հաճախ նույնացվում է լոբբինգի բազմաշերտ ու բազմաուղրտ ինստիտուտը, առաջին հերթին՝ հասարակական-քաղաքական և մեդիա դիսկուրսում, որոշ

¹⁴ Տե՛ս Thomas P. Lyon, John W. Maxwell, Astroturf: Interest group Lobbying and Corporate Strategy, Journal of Economics & Management Strategy, 2004, vol. 13, N 4:

չափով՝ նաև ակադեմիական գրականության մեջ: Սրանք սովորաբար հյուրընկալ պետության տարածքում հայրենի պետության շահերին ծառայող կազմակերպություններ են, որոնք հիմնականում հանրային քաղաքականության գործիքակազմով ազդում են հյուրընկալ պետության պետական իշխանության թևերի և հասարակական կարծիքի վրա¹⁵:

Միջանկյալ նշենք, որ լոբբիստական գործունեության մեկ այլ խումբ են, այսպես կոչված, **հատուկ խմբերը**: Դրանք պրոֆեսիոնալ կարողունակության տեր մարդկանց առևտրային կազմակերպություններ են, որոնք օպերատիվորեն և նպատակադրված ազդում են որևէ գործընթացի վրա՝ առևտրային կոնկրետ պատվերով:

4. Լոբբինգի իրականացման տեխնոլոգիաները

Լոբբինգի ինստիտուտն ունի իրեն խիստ բնորոշ տեխնոլոգիական գործիքակազմ, որի մեջ են մտնում.

1) **հասարակական կարծիքի համախմբումը** քաղաքացիական-հասարակական տարբեր ձեռնարկումների, իշխանություններին ուղղված դիմումների, ստորագրահավաքների, քարոզչական ակտիվ գործունեության և դատական գործընթացների նախաձեռնման միջոցով,

2) **ընտրարշավային գործիքակազմը**, որը ներառում է ընտրություններին անհատական կամ խմբային մասնակցության, դրանց ֆինանսավորման կամ աջակցության միջոցները,

3) **պաշտոնական հնարավորությունների և կապերի կիրառումը**, երբ լոբբիստական կազմակերպություններն օրենքով իրենց վերապահված հնարավորությունների շրջանակում կարողանում են ապահովել մասնակցությունը պետական ապարատի աշխատանքներին, ինչը տվյալ դեպքում ենթադրում է տարբեր իրավական ակտերի, նախագծերի և դրանց քննարկումների կազմակերպում, իշխանության մարմինների համար խորհրդատվությունների անցկացում, փորձագիտական կարծիքների տրամադրում և այլն,

4) **ոչ պաշտոնական կապերի գործադրումը**, որը ենթադրում է տարբեր գիտաժողովների, կլոր սեղանների, քննարկումների, սեմինարների և նմանաբնույթ այլ միջոցառումների կազմակերպում, ինչպես նաև անհատական հանդիպումներ և անձնական կապերի ստեղծում,

15 Լայնը և Մաքսվելը էթնիկ խմբերը դիտարկում են որպես օտարերկրյա լոբբիստական խմբեր, ինչը, մեր կարծիքով, կարող է թյուրըմբռնման տեղիք տալ, քանի որ էթնիկ լոբբիստական խմբերը հաճախ ձևավորվում են տվյալ երկրի քաղաքացի հանդիսացող, բայց տիտղոսակիր էթնոսը չներկայացնող էթնիկ միավորումների կողմից, ուստի այդ դեպքում դրանք չեն կարող համարվել օտարերկրյա: Օրինակ՝ տասնյակ տարիներով որևէ պետությունում ապրած և նրա քաղաքացի համարվող անհատների կողմից ձևավորվում են լոբբիստական խմբեր՝ իրենց հայրենիքին այս կամ այն ձևով օգնելու համար: Ուստի թեև Լայնն ու Մաքսվելը դրանք անվանում են օտարերկրյա, բայց, մեր կարծիքով, դա ամենևին էլ ճիշտ սահմանում չէ:

5) **պետական իշխանության թևերի և մարմինների վրա հոգեբանական ճնշման գործադրումը**, որը, ի թիվս այլոց, կարող է դրսևորվել նամակների, հեռագրերի, զանգերի և հանրային միջոցառումների տեսքով¹⁶:

5. «Փափուկ ուժի» քաղաքականության և լրբբինգի ինստիտուտի հարաբերակցությունը

«Փափուկ ուժի» տեխնոլոգիան և լրբբինգի ինստիտուտն ունեն գործառու-թային նմանություններ, որոնք քաղաքական գիտության մեջ ըստ պատշաճի քննարկված չեն:

Երբ որևէ խումբ կամ ազգային փոքրամասնություն, չտիրապետելով ավանդա-կան ուժի որևէ ինստիտուտի, կարողանում է ազդել ընդունող երկրի քաղաքական դեկավարության և հասարակական կարծիքի վրա, դա ևս «փափուկ ուժի» կիրառ-ման տեխնոլոգիա է ենթադրում, այն տարբերությամբ, որ «փափուկ ուժի» քաղա-քականությունն այս դեպքում չի թելադրվում դոմինանտ սուբյեկտի կողմից:

Այսինքն՝ ԱՄՆ-ն՝ իբրև դոմինանտ սուբյեկտ, շրջանառության մեջ է դրել «փափուկ ուժի» քաղաքականության տեխնոլոգիական ողջ գործիքակազմը, ո-րը ոչ պետական կազմակերպությունների կողմից կարող է ադապտացվել և գործառութային այլ նշանակությամբ կիրառվել:

Ամենևին պատահական չէ, որ Լիոնել Զեթերը լրբբինգը համարում է քաղա-քական համոզման արվեստ: Համոզման առանցքային դերի ու կարևորության մասին է խոսում նաև Ջոզեֆ Նայը:

Ինդիհրն առավել լավ պատկերացնելու համար քննության առնենք լրբբիստա-կան գործունեության տեսակներից մեկը՝ էթնիկ լրբբինգը, և փորձենք հասկանալ դրա գործառութային հարաբերակցությունը «փափուկ ուժի» տեսությանը:

Որպես կանոն, էթնիկ լրբբիստական խմբերը ձևավորվում են ազգային, կրո-նական, մշակութային համախմբման միջոցով՝ հյուրընկալող երկրի պետական իշխանության թևերի, տարածքային և տեղական իշխանությունների, հասարա-կական կազմակերպությունների հիման վրա՝ ի շահ իրենց հայրենի պետության, ուղղակի կամ անուղղակի ճնշումներ գործադրելու, քաղաքական նպատակներ դնելու և դրանց հասնելու համար: Էթնիկ լրբբիստական խմբերն իրենց հայրենի երկրների հետ ունեն միջնորդավորված կամ ուղղակի կապեր:

Էթնիկ լրբբիստական խմբերի գործունեության առանձնահատկությունները, որոնցով դրանք տարբերվում են լրբբիստական այլ խմբերից, հետևյալներն են.

16 Տե՛ս **Նահապետյան Հ.**, Հայ համայնքն ԱՄՆ-ում, Եր., 2010, էջ 14:

- **հիմնահարցի ձևակերպում**, երբ լրբբիստական խմբերը փորձում են բանաձևել որևէ հիմնական խնդիր և այն դարձնել հյուրընկալ պետության բարձրագույն իշխանության քննարկման և որոշման ենթակա հարց,

- **տեղեկատվության ապահովում**, երբ էթնիկ լրբբիստական խմբերը զգալի աշխատանքներ են կատարում անհրաժեշտ տեղեկատվություն հայթայթելու, վերլուծելու, փորձագիտական կարծիքի վերաձեռնելու և այն իշխանության մարմիններին տրամադրելու համար,

- **քաղաքականության մոնիթորինգ**, երբ էթնիկ լրբբիստական խմբերը մանրամասն մոնիթորինգի են ենթարկում իշխանությունների նախընթաց ու ներկա գործունեությունը և ըստ անհրաժեշտության կիրառում այն իշխանությունների հետ քաղաքական հարաբերությունների ճշտման և քաղաքական պլանավորման համար:

Քանի որ իրավական և կառուցակարգային կայացածության առումով ԱՄՆ-ում լրբբինգի ինստիտուտն ամենազարգացածներից է, անդրադառնանք հենց այդ երկրում էթնիկ լրբբիստական խմբերի գործունեության մի քանի առանձնահատկություններին.

- կառավարության ներկայացուցիչներին և Կոնգրեսի անդամներին համապատասխան տեղեկատվության մատակարարում կոնկրետ հարցի շուրջ,

- մասնակցության ապահովում լրբբիստական հետաքրքրություն ներկայացնող հարցի քննարկումներին,

- ԱՄՆ-ի հասարակական կարծիքի նպատակային ձևավորմանն ուղղված քարոզչական և լրատվական մեծածավալ աշխատանք,

- լրբբիստական կազմակերպությունների համար ընդունելի կամ նպատակահարմար թեկնածուների քարոզարշավների ֆինանսական և քաղաքական աջակցություն¹⁷:

Այսպիսով՝ և՛ «փափուկ ուժի» կիրառման, և՛ լրբբիստական գործունեության դեպքում փորձ է արվում.

- ուժի ավանդական կիրառումը բացառող մեթոդներով հասնելու հասարակական կարծիքի որոշակի փոփոխության կամ նպատակային ուղղորդման,

- ուժի ավանդական կիրառումը բացառող մեթոդներով հասնելու ցանկալի որոշումների ընդունման. տարբերությունն այս դեպքում այն է, որ «փափուկ ուժի» տեսությունը ձգտում է ձևավորելու էլիտա, իսկ լրբբինգի պարագայում հիմնականում փորձ է արվում հասնելու արդեն իսկ գոյություն ունեցող էլիտայի կողմից ցանկալի որոշումների ընդունմանը,

¹⁷ Տե՛ս Նահապետյան Հ., նշվ աշխ., էջ 87:

- համոզման և գրավչության շնորհիվ, ինչպես նաև արժեհամակարգային և քաղաքակրթական նույն ընկալումներն ունենալու հավաստմամբ հասնելու ակնկալվող արդյունքի,

- այս կամ այն հարցի լուծման համար ձևավորելու ընկերների և բարեկամների շրջանակ,

- օգտվելու հանրային դիվանագիտության ընձեռած լայն հնարավորություններից ու գործիքակազմերից և այլն:

Երկու դեպքում էլ գործ ունենք քաղաքական գործընթացի ուրույն և կայացած ինստիտուտների հետ, որոնք քաղաքական ուժ ու գործոն են և բացառում են ուժի ավանդական ընկալման՝ ռազմականության, ֆինանսական գործարքների, հարկադրանքի ու պարտադրման կիրառումը՝ բացառությամբ լրբբինգի կոռուպցիոն դրսևորումների, որոնք, սակայն, տարերային բնույթ չեն կրում:

Պետք է նկատել, որ «փափուկ ուժի» տեսությունը, ձևավորվելով համաշխարհային ազդեցության ձգտող տերության քաղաքագիտական դպրոցում և ըստ էության հանդես գալով որպես պետական քաղաքականության գործիք, վերցվել և ադապտացվել է ոչ պետական կազմավորումների, հատկապես՝ լրբբիստական կազմակերպությունների կողմից: Ուստի պատահական չէ, որ «փափուկ ուժի» գործիքակազմը սկսեց կիրառվել, ըստ էության, դրա սահմանումից շատ առաջ, ինչը համընկավ նաև լրբբինգի ինստիտուտի աննախընթաց վերելքին: Հետևաբար կարելի է նաև եզրակացնել, որ «փափուկ ուժի» քաղաքականության ու լրբբինգի ինստիտուտի նախընթաց և ներկա վերելքները մեծապես պայմանավորված են եղել մեկը մյուսով:

Գևորգ Մ. Ղուկասյան - գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է միջազգային հարաբերությունների ոլորտը, ներեվրոպական քաղաքական զարգացումները, լրբբինգի ինստիտուտը, հատկապես՝ էթնիկ լրբբինգը, «փափուկ ուժի» քաղաքականությունը, Եվրոպայի հայկական լրբբիի դերը ՀՀ-ԵՄ հարաբերությունների զարգացման գործում, դարաբաղյան հիմնախնդրի ազդեցությունը ՀՀ արտաքին քաղաքականության վրա և այլն:

Էլեկտրոնային հասցե՝ gmgkhusyan@outlook.com

Summary

ON THE INTERACTION OF THE “SOFT POWER” THEORY AND THE LOBBYING INSTITUTION

Gevorg M. Ghukasyan

Key words - “Soft power” theory, Joseph Nye, “hard” and “soft” powers, the institute of lobbying, traditional power, lobbying technology.

The article presents the foundations, origins and development of “soft power” theory, as well as the interests served by that theory. The post-war perception of traditional power and the need for a “soft power” theory are also discussed.

There are many parallels between the “soft power” theory and the lobbying institute, functional similarities and correlations in the framework of Political Science. The article tries to present that correlations, which can have a significant impact on the effectiveness of individual or complex applications of these tools and on better understanding of phenomena within political science.

The thing is that both the lobbying toolbar and “soft power” technology actually work on public opinion to have influence. The only difference is that normally the “soft power” technology dictated by the dominant actor, but in the case of lobbying, the decoration of public opinion is implemented in public scope, however, the ultimate target is not the society but the decision makers through that society. So the ultimate target of both are the elites anyway.

In “soft power” technology, one of the targets is the formation of decision-making frameworks with a specific outlook, and in the case of lobbying, as a rule, the decision-makers are again the target. The toolkits for reaching the target may be different.

In other words, “soft power” policy usually seeks to form an elite, and lobbying attempts to turn the already formed elite into a target of political pressure, often using technological tools of “soft power” policy.

Therefore, it is important to understand the theoretical and practical aspects of the above correlation and many other parallels, as well as to find out what layers of parallel development apply to functional co-operation and theoretical combination.

Thus, both in the use of “soft power” and in lobbying, an attempt is made:

- some modification or targeted guidance of public opinion in ways that exclude traditional use of force,
- to achieve the desired decisions by methods that exclude the traditional use of force,
- to achieve the expected result through persuasion and attraction, as well as by sharing the same civilizational perceptions and values,
- to create a circle of friends and relatives to solve any issue,

- to take advantage of the wide range of tools and opportunities provided by public diplomacy, etc.

In both cases, we are dealing with unique and well-established institutions of the political process that are political forces and factors that exclude the use of traditional perceptions of force – military, financial transactions, and coercion, with the exception of corrupt manifestations of lobbying, but of an elementary nature. they don't.

It should be noted that the theory of “soft power”, formed in the political school of a state seeking global influence, and, in effect, being a tool of state policy, was adopted and adapted by non-state organizations, especially lobbying organizations. So it is no coincidence that “soft power” tools began to be used, in fact, long before their introduction, which coincided with the unprecedented rise of the lobbying institute. Therefore, it can also be concluded that the advance and present rise of the “soft power” policy and lobbying institute have been largely dependent on one another.

Резюме

О СООТНОШЕНИИ ТЕОРИИ «МЯГКОЙ СИЛЫ» И ИНСТИТУТА ЛОББИРОВАНИЯ

Геворг М. Гукасян

Ключевые слова - концепция «мягкой силы», Джозеф Най, «жесткая» и «мягкая» сила, институт лоббирования, преобразование традиционной силы, технология лоббирования.

В политической науке можно провести много параллелей и найти функциональные сходства между теорией «мягкой силы» и лоббированием. Данная статья является попыткой подчеркнуть эту корреляцию, которая может оказать существенное влияние на эффективность их отдельных или комплексных применений и на лучшее понимание явлений в политической науке.

Дело в том, что как инструменты лоббирования, так и технология «мягкой силы» имеют целью повлиять на общественное мнение, с той разницей, что, как правило, политика «мягкой силы» диктуется доминирующим субъектом, а в случае лоббирования общественное мнение формируется в публичной сфере, однако конечной целью является не общество, а лица, принимающие решения в этом обществе.

Таким образом, конечной целью обоих в любом случае являются элиты. В случае технологии «мягкой силы» одной из целей является формирование структур принятия решений с определенным кругозором, а в случае лоббирования, как правило, целью также являются лица, принимающие решения. Инструменты для достижения цели могут быть различными. Другими словами, политика «мягкой силы» обычно пытается сформировать элиту, в то время как лоббирование пытается превратить уже

սֆորմированную элиту в цель политического давления, часто используя технологические инструменты политики «мягкой силы».

Поэтому важно учитывать теоретические и практические аспекты вышеуказанной корреляции и десятки других параллелей, а также выяснить, какие уровни совместного инструментального применения и теоретических комбинаций содержат эти два параллельно развивающихся института.

Таким образом, как при использовании «мягкой силы», так и при лоббировании совершается попытка:

- добиться некоторых изменений в общественном мнении или целевого направления путем исключения традиционного применения силы,
- достичь желаемых решений путем исключения традиционного применения силы,
- достичь ожидаемого результата с помощью убеждения и привлекательности, разделяя то же самое восприятие общих системных и цивилизационных представлений,
- создать круг друзей и союзников для решения того или иного вопроса,
- использовать широкий спектр возможностей и инструментов, предлагаемых публичной дипломатией и т. д.

В обоих случаях мы имеем дело с уникальными и устоявшимися институтами политического процесса, которые являются политическими силами и факторами и которые исключают применение традиционных представлений о силе - военных, финансовых операций и принуждения, за исключением коррупционных проявлений лоббирования, которые не носят существенный характер.

Следует отметить, что теория «мягкой силы», сформировавшаяся в политической школе государства, стремящегося к глобальному влиянию и являющегося инструментом государственной политики, была принята и адаптирована негосударственными организациями, особенно лоббистскими. Поэтому не случайно, что инструменты «мягкой силы» начали использоваться задолго до того, как они были определены, что совпало с беспрецедентным ростом института лоббирования. Таким образом, можно также сделать вывод, что прогресс и нынешний рост политики «мягкой силы» и института лоббирования в значительной степени находятся в зависимости друг от друга.

REFERENCES

- 1) **Nahapetyan H.**, Hay hamaynk' n AMN-um, Yer., 2010 (**In Armenian**).
- 2) «P'ap'uk u zhi» (Soft Power) tekhnologiyai kirarman anhrzheshhut'yan masin, Yer., 2016, <https://mnmargaryan.wordpress.com/2016/08/27/%d6%83%d5%a1%d6%83%d5%b8%d6%82%d5%af-%d5%b8%d6%82%d5%aa%d5%ab-soft-power-%d5%bf%d5%a5%d5%ad%d5%b6%d5%b8%d5%ac%d5%b8%d5%a3%d5%ab%d5%a1%d5%b5%d5%ab-%d5%af%d5%ab%d6%80%d5%a1%d5%bc%d5%b4/#more-237> (**In Armenian**).